ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի որակավորման հանձնաժողովի կազմի հաստատման մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 13.05.2022 թվականի թիվ 8/13-Ա որոշմամբ կազմավորվել է Պալատի որակավորման հանձնաժողով՝ մինչև 2024 թվականի մայիսի 13-ը պաշտոնավարման ժամկետով:

««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) ուժով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ փաստաբանների պալատի որակավորման նոր հանձնաժողով **(այսուհետ՝ նաև Որակավորման հանձնաժողով)** կազմավորել:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ ***փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.***

1) փաստաբանների պալատի խորհրդի ընտրած հինգ փաստաբան.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության

21 մարտի 2023թ.
թիվ 8/11-Ա

նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) Վճռաբեկ դատարանից մեկ դատավոր՝ Վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական՝ սույն հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

Պալատի կանոնադրության 18.2 կետի համաձայն՝ ***փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ <u>երկու տարի ժամկետով</u>...:***

26.01.2023թ. (մուտք՝ 179-23) և 30.01.2023թ. (մուտք՝ 197-23) ՀՀ փաստաբանների պալատ է մուտքագրվել Վճռաբեկ դատարանի նախագահի և Արդարադատության նախարարի գրությունները, որոնցով առաջարկվել են համապատասխանաբար Վճռաբեկ դատարանի դատավոր Արթուր Պողոսյանի և Արդարադատության նախարարի խորհրդական Արտյոմ Սուջյանի թեկնածությունները:

«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 8-րդ կետի համաձայն Պալատի խորհուրդը հայտարարել է ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի **(այսուհետ՝ նաև Հանձնաժողով)** իրավաբան-գիտնական անդամների մրցույթ:

Մրցույթին մասնակցել է երեք իրավաբան գիտնական: Պալատի խորհրդի 03.02.2023թ. թիվ 4/6-Լ որոշմամբ երեք թեկնածուներն ընդգրկվել են իրավաբան գիտնականին թեկնածուների ցանկում:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 21-րդ, 22-րդ և 23-րդ կետերի համաձայն Պալատի խորհրդի 10.03.2023թ. թիվ 6/15-Ա որոշմամբ Պալատի խորհրդի կողմից հաստատված որակավորման հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամների թեկնածուների կազմից ի.գ.թ. Արսեն Համբարձումյանը և ի.գ.թ. Միսակ Մարկոսյանը ընտրվել են որպես ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամներ:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ *Հանձնաժողովի հինգ փաստաբան անդամները ընտրվում են Պալատի նախագահի առաջադրմամբ՝ արտոնագիրը չկասեցված, բարձր մասնագիտական որակներով օժտված և առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական ստաժ (այդ ժամանակահատվածի մեջ չի ներառվում փաստաբանի արտոնագրի կասեցված ժամանակահատվածը) ունեցող փաստաբանների կազմից: Սույն կետում նշված սահմանափակումը չի տարածվում գիտական աստիճան ունեցող փաստաբանի նկատմամբ:*

Կարգի 10-րդ կետի համաձայն Պալատի նախագահի կողմից որպես Հանձնաժողովի փաստաբան անդամներ Պալատի խորհրդին է առաջարկվել

բարձր մասնագիտական որակներով օժտված փաստաբաններ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Արա Զոհրաբյանի (արտոնագիր № 1, մոտ 22 տարվա փաստաբանական ստաժ), Գառնիկ Թուխտարյանի (արտոնագիր № 531, մոտ 17 տարվա փաստաբանական ստաժ), իրավաբանական գիտությունների թեկնածու Հունան Տեր-Վարդանյանի (արտոնագիր № 1108, մոտ 13 տարվա փաստաբանական ստաժ), Արմինե Ֆանյանի (արտոնագիր № 1262, մոտ 12 տարվա փաստաբանական ստաժ) և իրավաբանական գիտությունների թեկնածու Տաթևիկ Դավթյանի (արտոնագիր № 2641, մոտ 4 տարվա փաստաբանական ստաժ) թեկնածությունները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Պալատի նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 13-րդ ենթակետով, 18.2-րդ և 18.3-րդ կետերի, ինչպես նաև Կարգի 5-րդ, 6-րդ, 10-րդ, 12-րդ կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից առաջադրված փաստաբաններ Արա Զոհրաբյանին (արտոնագիր № 1), Գառնիկ Թուխտարյանին (արտոնագիր № 531), Հունան Տեր-Վարդանյանին (արտոնագիր № 1108), Արմինե Ֆանյանին (արտոնագիր № 1262) և Տաթևիկ Դավթյանին (արտոնագիր № 2641) ընտրել որպես ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի անդամներ:

2. Կազմավորել և հաստատել ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը՝ հետևյալ կազմով.

1) ***Արա Զոհրաբյան՝ ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 1).***
2) ***Հունան Տեր-Վարդանյան՝ ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 1108).***
3) ***Գառնիկ Թուխտարյան՝ փաստաբան (արտոնագիր № 531).***
4) ***Արմինե Ֆանյան՝ փաստաբան (արտոնագիր № 1262).***
5) ***Տաթևիկ Դավթյան՝ ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 2641).***
6) ***Մարգարիտա Զալիբեկյան՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ.***

(կետը փոփոխվել է 29.10.2024թ. թիվ 16/14-Լ որոշմամբ)

7) ***Արթուր Պողոսյան՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր.***
8) ***Միսակ Մարկոսյան՝ ի.գ.թ.- գիտական անդամ,***
9) ***Արսեն Համբարձումյան՝ ի.գ.թ.- գիտական անդամ:***

3. Սահմանել, որ ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով և գործում է 2023 թվականի մարտի 21-ից մինչև 2025 թվականի մարտի 21-ը (ներառյալ):

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պալատի որակավորման հանձնաժողովի նորընտիր անդամներին, ինչպես նաև ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին ապահովել Հանձնաժողովի նորընտիր կազմի առաջին նիստի կազմակերպման տեխնիկական մասը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

21 մարտի 2023թ.
թիվ 8/11-Ա
ք. Երևան